ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԱՅԻՍՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե 377766
ՀՀ.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
Հեռ 63541

ԹԻՎ 97
04.11.2011 թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան՝ պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Ձեզ Մայիսյանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 9 արտահերթ նիստի թվով 3 որոշումները:

Առդիր՝ 7 թերթ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

10478-11
04 11 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հոկտեմբերի 2011թվական

թիվ 9 արտահերթ նիստի
թիվ 1 որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Հ. Հակոբյան			
2. Հ. Միդոյան			
3. Ա. Հարությունյան			
4. Եղ. Մովսիսյան			
5. Ա. Սիմոնյան			

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2011 թվական հոկտեմբերի 31 գ. Մայիսյան

Հավելված
Մայիսյան համայնքի ավագանու
2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 9
արտահերթ նիստի թիվ 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Ե. Մովսիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին :

Զեկ. Ե. Մովսիսյան

3. Քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Զեկ. Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

31 հոկտեմբերի 2011 թվական

թիվ 9 արտահերթ նիստի
թիվ 2-Ն որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում 2012թվականի տեղական տուրքերը և վճարները սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Ավագանու անդամներ՝

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Հ. Հակոբյան			
2. Հ. Միդոյան			
3. Ա. Հարությունյան			
4. Եղ. Մովսիսյան			
5. Ա. Սիմոնյան			

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2011 թվական հոկտեմբերի 31 գ. Մայիսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի
ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել `հիմնական օբյեկտների համար՝
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝/ 5000 / հինգ հազար դրամ.
2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար /դրամ.
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,
գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/հազար հինգհարյուր/ դրամ,
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազարհինգ հարյուր/դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/հազար հինգ հարյուր /դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույնորոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 /երկու հազարհինգհարյուր/դրամ:
:4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000/չորս հազար/ դրամ
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 /չորս հազար / դրամ:
3) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.
4) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:
5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000/հիսուն հազար/դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար / դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:
7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար / դրամ
8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/հինգ հազար /դրամ:
9.Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000/մեկ հազար/ դրամ:
10. Գյուղապետորանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 5000/ հինգ հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հոկտեմբերի 2011 թվական թիվ 9 արտահերթ նիստի
թիվ 3 որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Դիմում ներկայացրած ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Հ. Հակոբյան			
2. Հ. Միդոյան			
3. Ա. Հարությունյան			
4. Եղ. Մովսիսյան			
5. Ա. Սիմոնյան			

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2011թվական հոկտեմբերի 31 գ. Մայիսյան

Հավելված
Սևանի համայնքի ավագանու
2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 9
արտահերթ նիստի թիվ 3 որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1.	Մելքոնյան Գարիկ	50.000 դրամ
2.	Ավդոյան Յուրա	50.000 դրամ
3.	Օհանյան Հրաչյա	50.000 դրամ
4.	Մանուկյան Արսեն	50.000 դրամ
5.	Ադամյան Իշխան	50.000 դրամ
6.	Գևորգյան Լիդա	50.000 դրամ
7.	Ավագյան Ալբերտ	50.000 դրամ
8.	Սարգսյան Արտյոմ	30.000 դրամ
9.	Թահմազյան Հասմիկ	30.000 դրամ
10.	Գոլովորյան Գայանե	30.000 դրամ